

Աշխարհագրության մարզային փուլ - 2022 թ.

Հարցաթերթ - 10-րդ դասարան - տևողությունը՝ 120 րոպե

/գնահատման քայլը՝ 0.25 միավոր /

1. Հիմնավորել Կարմիր ծովի ջրի բարձր աղիության պատճառները (բերել 4 փաստարկ).....2 միավոր
2. Ի՞նչ ընդհանրություն ունեն նշված երկրները (նշել 4 փաստարկ).....2 միավոր
Սաուդյան Արաբիա, Քուվեյթ, Քաթար, Բահրեյն
3. Քանի՞ հորիզոնական է տարված Ավստրալիայի ֆիզիկական քարտեզի վրա՝ հաշված Խաղաղ օվկիանոսի մակարդակից մինչև Կոսցյուշկոյի գագաթ, եթե հորիզոնականները տարված են յուրաքանչյուր 200 մետրը մեկ (պատասխանը ստանալ հաշվարկով).....1 միավոր
4. Թվարկել ՀՀ տարածքում Արաքսի ավազանին պատկանող գետերը (առնվազն 8-ը, վտակները չգրել).....2 միավոր
5. Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը - 4⁰ C է, իսկ ստորոտին՝ + 10⁰ C: Մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին 400 մմ է:
ա) Որոշել լեռան հարաբերական բարձրությունը,
բ) Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան ստորոտին (հաշվարկը կատարել 5⁰ C-ով).....2 միավոր
6. Գրել նշված ազգերի լեզվաընտանիքները և լեզվախմբերը (առանձին-առանձին).....2 միավոր
կոմիներ, լատիշներ, քրդեր, հունգարներ, արաբներ,
վրացիներ, կարակալպակներ, ավստրիացիներ,
7. Տրված քաղաքների շարքից դուրս գրել ծովային նավահանգիստները.....1 միավոր
Ադանա, Կասաբլանկա, Հռոմ, Սանա, Դոհա, Անտանանարիվու, Պուսան, Դոդոնա, Պալերմո, Վիլնյուս, Բուխարեստ, Խաբարովսկ
8. Ո՞վ (ովքե՞ր) և ե՞րբ (տարի կամ դար) են հայտնագործել կամ ուսումնասիրել.....2 միավոր
ա) Բահամյան կղզիները Բ) Իսլանդիա կղզին
գ) Նոր Գվինեա կղզին Դ) Հարավային բևեռը
9. Քաղաքի բնակչության թիվը 80 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 1600 մարդ: Եկաճների թիվը 6000 է, մեկնաճների թիվը՝ 2800 մարդ:
ա) Որոշել միգրացիայի մնացորդը:
բ) Որոշել քաղաքի բնակչության թիվը մեկ տարի հետո.....2 միավոր
10. Գրել այն մշակաբույսերի համարները, որոնք հացահատիկային են.....1 միավոր
1. սոյա 2. վարսակ 3. շաքարեղեգ 4. վուշ
5. գարի 6. արևածաղիկ 7. բրինձ 8. աշորա

11. Գրել ՀՀ այն բնակավայրերը, որոնք երկաթուղային հանգույցներ են.....1 միավոր

12. Գրել այն ծովային հոսանքների համարները, որոնք պատկանում են

Ատլանտյան օվկիանոսին.....1 միավոր

- | | | | |
|------------------|--------------|---------------|----------------|
| 1. Սոմալիի | 2. Գվինեական | 3. Պերուական | 4. Գվիանական |
| 5. Կալիֆոռնիական | 6. Կանարյան | 7. Մուսոնային | 8. Ֆոլկլենդյան |

13. Գրել այն պետությունների համարները, որոնք սահմանակից են Ֆրանսիային.....1 միավոր

- | | | | |
|----------------|------------|------------------|-----------------|
| 1. Պորտուգալիա | 2. Իսպանիա | 3. Լյուքսեմբուրգ | 4. Նիդերլանդներ |
| 5. Լիխտենշտեյն | 6. Ավստրիա | 7. Անդորա | 8. Բելգիա |

Առարկայական հանձնաժողովի նախագահ

Ա. Թ. Գրիգորյան